ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՆ ՍԵՐԲԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔ ԻՐԻՆԵՈՍ

ԻՐԻՆԵՈՍ Ա ՊԱՏՐԻԱՐՔ

Նորին Սրբութիւն Սերբիայի պատրիարք Իրինեոսը՝ աւազանի անունով Միրոսլաւ Գաւրիլովիչ, ծնուել է 1930 թ. օգոստոսի 28-ին Վիդովա գիւղում:

Սկզբնական կրթութիւնը ստացել է հայրենի գիւղում, ապա ուսանել է գիմնազիայում:

1951 թ. ուսանել է Պրիզրենեան հոգեւոր ճեմարանում, այնուհետեւ՝ Բելգրադի համալսարանի աստուածաբանութեան ֆակուլտետում: Ուսումն աւարտելոց յետոյ զօրակոչուել է բանակ:

Զինուորական ծառայութիւնն աւարտելուց յետոյ նշանակուել է Պրիզրենեան հոգեւոր ճեմարանի դասախօս եւ պաշտօնավարել մինչեւ 1969 թ.:

1959 թ. Ռակովիցա վանքում Սերբիայի Գերման պատրիարքի կողմից ընդունել է վանականութիւն:

1959 թ. հոկտեմբերի 24-ին ձեռնադրուել է սարկաւագ, իսկ նոյն ամսի 27-ին՝ կուսակրօն քահանայ:

1969 թ. նշանակուել է Օստրոժսկո վանքի վանական դպրոցի տեսուչ:

1971-1974 թթ. եղել է Պրիզրենեան հոգեւոր ճեմարանի ռեկտոր:

1974 թ. ընտրուել է Մորաւիայի եպիսկոպոս եւ ձեռնադրուել յունիսի 14-ին:

1975 թ. նշանակուել է Նիշի վիճակի թեմական առաջնորդ:

2010 թ. յունուարի 22-ին Բելգրադում կայացած եկեղեցական ժողովում ընտրուել է Սերբիայի քառասունհինգերորդ պատրիարք: